ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2018/129

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 21.12.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն 21.12.2018թ Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Ազգային ժողովի կողմից խմելու ջուր և մեկանգամյա օգտագործման բաժակներ ձեռքբերելու նպատակով հայտարարվել է ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ):

Աճուրդին մասնակցության հայտեր են ներկայացրել «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն և Ա/Ձ Գրիգոր Բաբայանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ հանձնաժողով) 04.12.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ Աճուրդի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել Ա/Ձ Գրիգոր Բաբայանը (այսուհետ նաև՝ Ա/Ձ):

Նույն արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 13.12.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը ուսումնասիրել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցի կողմից ներկայացված փաստաթղթերը և որոշել՝ Ա/Ձ Գրիգոր Բաբայանի հայտը գնահատել բավարար և առաջին չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից:

«Լեզվի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, որը սպասարկում է հանրապետության կյանքի բոլոր ոլորտները: Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում...:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացին կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին կետի «զ» պարբերության համաձայն՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտու-ղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն ներկայացված առաջարկի:

Աճուրդի հրավերի 3.1-րդ կետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 2-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝ իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 3-ի:

Հրավերի 4.3. կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն, որը ներառում է հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում առաջարկվող ապրանքի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Հրավերի 7.10-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում՝

ա. համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը....:

Հրավերի 8.3-րդ կետի համաձայն՝ Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է համակարգի միջոցով: Ընդ որում պայմանագրում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Այսպիսով, նշված իրավակարգավորումներից ակնհայտ է դառնում, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվում է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, որը ներառում է առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, և նշված տվյալները ներառում են նույնությամբ իր արտացոլումն է գտնում կնքվող պայմանագրի համապատասխան հավելվածում:

Գնումների հետ կապված բողոքը քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից ս.թ. դեկտեմբերի 11-ին ՀՀ ԱԺ

ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովի քարտուղարի էլ. հասցեին է ներկայացվել փաստաթղթեր ներկայացնելու պահանջի վերաբերյալ դիմում՝ առաջին տեղ/հաղթող մասնակից ճանաչված Ա/Ձ-ի որակավորման փաստաթղթերը «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին ներկայացնելու վերաբերյալ, որին ի պատասխան՝ գնահատող հանձնաժողովի էլ. հասցեից ստացել ենք փաստաթղթեր և գրություն, որում մասնավորապես ասվում է. «Հարգելի մասնակից, անհապաղ Ձեզ ենք ուղարկում ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով իրականացվող գնման ընթացակարգի առաջին չափաբաժնի առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված հայտը, որակավորման փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի աճուրդի արդյունքի արձանագրությունը: Տեղեկացնում ենք, որ Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված՝ հրավերով սահմանված որակավորման փաստաթղթերը թերի են ներկայացված և նրան առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև ս.թ. դեկտեմբերի 13-ը, ժամը՝ 09:00) պահանջվող փաստաթղթերը ուղարկել eauction.armeps.am համակարգի միջոցով՝ էլեկտրոնային ստորագրությամբ»:

Տպավորություն է ստեղծվում, որ Աճուրդի գնահատող հանձնաժողովը, ի սկզբանե, Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատել է հրավերի պահանջներին բավարարող, սակայն ստանալով դիմում «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից՝ Ա/Ձ-ի ներկայացված փաստաթղթերը իրեն տրամադրելու խնդրանքով, նոր է նկատել, որ փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ և արագ փորձել շտկել ստեղծված իրավիճակը՝ փաստացիորեն տալով Ա/Ձ Գրիգոր Բաբայանին շտկելու հնարավորություն, բայց մոռանալով ուղղում կատարել համապատասխան արձանագրությունում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնում ենք, որ www.gnumner.am համացանցային կայքում այդպես էլ չի հրապարակվել ոչ մի արձանագրություն, որտեղ գնահատող հանձնաժաղովը կարձանագրեր, թե ինչ անհամապատասխանություններ են արձանագրվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում:

Այնուհետև՝ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից ս.թ. դեկտեմբերի 14-ին նորից գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլ. հասցեին ներկայացրել ենք փաստաթղթերի պահանջի դիմում՝ արդեն արձանագրված անհամապատասխանությունների շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթերը բողոքաբերին տրամադրելու խնդրանքով:

Ի պատասխան վերոնշված դիմումի՝ գնահատող հանձնաժողովի կողմից 17.12.2018թ. վերջապես ներկայացվել է Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված Հավելված 3-ը:

Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված Հավելված 3-ի ուսումնասիրությունից հստակ է դառնում, որ ներկայացված շտկված Հավելված 3-ը նույնպես չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից շտկման արդյունքում ներկայացված Հավելված 3-ով 1-ին չափաբաժնի անվանում նշվել է «Aqua arma», այնինչ հրավերի տեխնիկական-բնութագրով 1-ին չափաբաժնի անվանում նշված է՝ «ըմպելու ջուր», Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից շտկման արդյունքում ներկայացված Հավելված 3-ով արտադրողի անվանում նշված է «Aqua arma water company» ՍՊԸ (անգլալեզու, անգլատառ), այնինչ այդպիսի անվանումով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն գոյություն չունի: Ավելին, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում պետական պաշտոնական լեզուն գրական հայերենն է, ինչը նշանակում է, որ ՀՀ-ում չի կարող գոյություն ունենալ անգլալեզու հայկական ռեզիդենտ ընկերություն:

Փաստորեն, այս պարագայում Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված հավելված 3-ով չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջներին, հակասում է հրավերի պահանջներին և Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի ուժով նման հայտը պետք է գնահատվեր անբավարար և մերժվեր, մինչդեռ դա տեղի չի ունեցել:

Աճուրդի գնահատող հանձնաժողովը gnumner.am համացանցային կայքում, չհրապարակելով ոչ մի արձանագրություն, որտեղ արձանագրվել է Ա/Ձ Գրիգոր Բաբայանի որակավորման փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները և միայն հրապարակելով թիվ 3 արձանագրությունը, որտեղ ըստ գնահատող հանձնաժողովի՝ ուսումնասիրվել է Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից շտկված անհամապատասխանությունները և Ա/Ձ Գրիգոր Բաբայանը ճանաչվել է ընտրված մասնակից՝ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն ստիպված կրկին անգամ փաստաթղթերի պահանջի դիմում է ներկայացրել գնահատող հանձնաժողովին, խնդրելով՝ անհապաղ տրամադրել էլ. աճուրդի շրջանակներում առաջին տեղ/հաղթող մասնակից ճանաչված՝ Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու արդյունքում ներկայացված փաստաթղթերը՝ այդպես էլ չիմանալով ինչ անհամապատասխանություններ է արձանագրվել:

Արդյունքում «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն այս մասով զրկվել է ամբողջական փաստաթղթերը ուսումնասիրելու և համապատասխանաբար՝ դրանք նաև անհրաժեշտության դեպքում բողոքարկելու հնարավորությունից:

«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է.

1. Դադարեցնել ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 13.12.2018թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ Ա/Ձ Գրիգոր Բաբայանին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին մերժել Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված հայտը:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

2. <u>ՀՀ Ազգային ժողովի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Ազգային ժողովը «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից 21.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 14.01.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

« Ի պատասխան Ձեր՝ 2018 թվականի դեկտեմբերի 21-ի գրությամբ ներկայացված, ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով խմելու ջրերի և մեկանգամյա օգտագործման բաժակների ձեռքբերման նպատակով իրականացված էլեկտրոնային աճուրդի (այսուհետ՝ Աճուրդ) բողոքի վերաբերյալ, ներկայացնում ենք մեր դիրքորոշումը.

«Վերոնշված աճուրդին մասնակցության հայտեր են ներկայացրել «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն և Ա/Ձ Գրիգոր Բաբայանը (այսուհետ՝ Ա/Ձ):

Հարկ ենք համարում նշել, որ Աճուրդին հայտ են ներկայացրել ութ մասնակից՝ երկու չափաբաժինների մասով: Աճուրդի առաջին չափաբաժնի մասով (ըմպելու ջուր) հայտ են ներկայացվել վեց մասնակից, որոնցից չորսի հայտերը ավտոմատ մերժվել են eauction.armeps.am համակարգի կողմից՝ նախահաշվային գինը գերազանցելու պատճառով:

Տպավորություն է ստեղծվում, որ Աճուրդի գնահատող հանձնաժողովն, ի սկզբանե, Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատել է հրավերի պահանջներին բավարարող, սակայն ստանալով դիմում «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից՝ Ա/Ձ-ի ներկայացրած փաստաթղթերն իրեն տրամադրելու խնդրանքով, նոր է նկատել, որ փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ և արագ փորձել շտկել ստեղծված իրավիճակը՝ փաստացիորեն տալով Ա/Ձ Գրիգոր Բաբայանին շտկելու հնարավորություն, բայց մոռանալով ուղղում կատարել համապատասխան արձանագրությունում:

Գնահատող հանձնաժողովը 04.12.2018թ. գնահատելով մասնակիցների դիմում-հայտարարությունները առաջին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել Ա/Ձ Գրիգոր Բաբայանին, իսկ երկրորդ տեղ՝ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին, ինչի մասին կազմվել է արձանագրություն և ծանուցում, որոնք նույն օրը սահմանված կարգով հրապարակվել են համակարգում, իսկ արձանագրությունը՝ նաև www.procurement.am կայքում:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվությունը ստացվել է 07.12.2018թ., համաձայն որի՝ Ա/Ձ Գրիգոր Բաբայանի ներկայացրած հայտարարությունները իրականությանը համապատասխան են:

Սահմանված ժամկետում Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված՝ հրավերով սահմանված որակավորման փաստաթղթերով ներկայացված մատակարարվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացված են եղել թերի: Մասնավորապես՝ պատվիրատուի կողմից սահմանված տեխնիկական բնութագրերի հետևյալ պահանջը՝ «Նախքան ֆիլտրումը պետք է իրականացվի ջրի համի, հոտի և գույնի համապատասխանեցում ակտիվացված ածխի ֆիլտրի օգտագործմամբ, իսկ ածխի վերականգնումը պետք է կատարվի ամեն օր հետադարձ լվացման մեթոդով», մասնակցի կողմից ներկայացվող տեխնիկական բնութագրերում չի նշվել:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի նիստը կասեցվել է և Ա/Ձ Գրիգոր Բաբայանին առաջարկվել՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 2018թ. դեկտեմբերի 13, ժամը՝ 09:00) շտկել անհամապատասխանությունը և պահանջվող

փաստաթղթերը ուղարկել համակարգի միջոցով՝ էլեկտրոնային ստորագրությամբ, ինչի մասին նույն օրը՝ 11.12.2018թ., eauction.armeps.am համակարգում հրապարակվել է ծանուցում:

«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից 10.12.2018թ. էլեկտրոնային փոստով ստացվել է դիմում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ա/Ձ Գրիգոր Բաբայանի հայտի, այդ թվում նաև որակավորման փաստաթղթերի և գնահատող հանձնաժողովի արձանագրությունների պատճենները պահանջելու վերաբերյալ: Նույն օրը՝ պահանջի հիման վրա, գնահատող հանձնաժողովի քարտուղարը «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին էլեկտրոնային փոստով տրամադրել է պահանջվող փաստաղթղթերը՝ նամակի տեքստում նշելով, որ Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված՝ հրավերով սահմանված որակավորման փաստաթղթերը թերի են ներկայացված և նրան առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև ս.թ. դեկտեմբերի 13-ը, ժամը՝ 09:00) պահանջվող փաստաթղթերը ուղարկել eauction.armeps.am համակարգի միջոցով՝ էլեկտրոնային ստորագրությամբ:

Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից 12.12.2018թ. շտկվել է անհամապատասխանությունը և պահանջված ձևով ուղարկվել համակարգի միջոցով՝ էլեկտրոնային ստորագրությամբ:

13.12.2018թ. գնահատող հանձնաժողովը որոշել է՝ առաջին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ա/Ձ Գրիգոր Բաբայանին ճանաչել որպես ընտրված մասնակից:

«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից ստացված դիմումում չկան նշումներ որևէ անհամապատասխանության մասին, ուստի՝ գնահատող հանձնաժողովը նման ենթադրություններ չէր կարող անել, որպեսզի արագ փորձեր շտկել ստեղծված իրավիճակը:

Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված փաստաթղթերում տեղ գտած անհամապատասխանությունը գնահատող հանձնաժողովի կողմից հայտնաբերվել է ինքնուրույն՝ անկախ որևէ դիմումից:

Բողոքաբերը նշել է, որ www.gnumner.am համացանցային կայքում այդպես էլ չի հրապարակվել ոչ մի արձանագրություն, որտեղ գնահատող հանձնաժողովը կարձանագրեր, թե ինչ անհամապատասխանություններ են արձանագրվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի համաձայն՝ որակավորման չափանիշներին իր

համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ անհամապատասխանություններ արձանագրվելու օրը քարտուղարը՝ այդ մասին ծանուցումը, համակարգի միջոցով հրապարակել է eauction համակարգում՝ նկարագրելով արձանագրված անհամապատասխանությունները:

Բողոքաբերը նշել է նաև, որ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից ս.թ. դեկտեմբերի 14-ին նորից գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլ. հասցեին ներկայացրել ենք փաստաթղթերի պահանջի դիմում՝ արդեն արձանագրված անհամապատասխանությունների շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթերը բողոքաբերին տրամադրելու խնդրանքով:

Նշենք, որ նախորդ դիմումի համաձայն՝ նման պահանջ չի ներկայացվել, իսկ այլ փաստաթուղթ պահանջելու համար հարկավոր է դիմում ներկայացնել դրա մասով:

Ներկայացված դիմումի համաձայն՝ 17.12.2018թ. գնահատող հանձնաժողովի քարտուղարը «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին էլեկտրոնային փոստով տրամադրել է պահանջվող փաստաղթղերը:

Բողոքաբերը նշել է, որ Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից շտկման արդյունքում ներկայացված թիվ 3 հավելվածով 1-ին չափաբաժնի անվանում նշվել է Aqua arma, այնինչ հրավերի տեխնիկական-բնութագրով 1-ին չափաբաժնի անվանում նշված է՝ ընպելու ջուր, Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից շտկման արդյունքում ներկայացված թիվ 3 հավելվածով արտադրողի անվանում նշված է «Aqua arma water company» ՍՊԸ (անգլյալեզու անգլյատառ), այնինչ այդպիսի անվանումով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն գոյություն չունի:

Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված թիվ 3 հավելվածում պահանջվում է նշել ոչ թե չափաբաժնի անունը, այլ առաջարկվող ապրանքի անվանումը, իսկ լատինատառ նշված «Aqua arma» անվանումը առաջարկվող ապրանքի անվանումն է, ինչը նշվում է ապրանքի պիտակին:

Որակավորման փաստաթղթերի գնահատման ժամանակ, գնահատող հանձնաժողովի կողմից՝ ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային ռեգիստրում որոնման

արդյունքում, պարզ է դարձել, որ նշված ՍՊԸ-ն գոյություն ունի «ԱՔՎԱ ԱՐՄԱ ՈՒՈԹԵՐ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ, սակայն թիվ 3 հավելվածում մասնակցի կողմից նշվել է այդ ՍՊԸ-ի կանոնադրությամբ հաստատված անգլերեն անվանումը:

25.12.2018թ. կայացած նիստից հետո՝ 27.12.2018թ., թիվ 1.1/5381-18 գրությամբ, պատվիրատուի կողմից ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից հարցում է կատարվել վերոնշյալ իրավաբանական անձի գոյություն ունենալու մասին:

Գործակալությունը 08.01.2019թ. թիվ 13/35-19 գրությամբ հաստատել է վերոնշյալ ՍՊԸ-ի գրանցման փաստը և ուղարկել կանոնադրության պատճեն, որում առկա է ՍՊԸ-ի անվանման անգլերեն տարբերակը:

Բողոքի տեքստում առկա է նաև հղում՝ «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածին: Հարկ ենք համարում նշել, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի՝ ՀՀ կառավարությունը հաստատում է հրավերի և պայմանագրի հիմնական պայմանները, սակայն այդ հիմնական պայմաններով նման պահանջ չի սահմանվում: Ուստի հրավերով պահանջ չի ներկայացվել այն մասին, որ առաջարկվող ապրանքի անվանման և/կամ արտադրող կազմակերպության անվանման մեջ այլ լեզվով գրառումների արկայությունը հայտի մերժման հիմք է:

Վերոնշյալը հաշվի առնելով, մեր դիրքորոշումը հետևյալն է՝ Բողոքում չկան այնպիսի կետեր կամ հղումներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ Ա/Ձ Գրիգոր Բաբայանի հայտը մերժելու համար:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին ՀՀ Ազգային ժողովի լիազորված ներկայացուցիչներ Ռուզաննա Հովհաննիսյանը և Պետրոս Մարգարյանը:

<u>3. ԳԲՔԱ-ԷՍ-2018/129 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից 21.12.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ Ազգային Ժողովի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 14.01.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի

գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 04.12.2018թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 2 և 13.12.2018թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունը, Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից էլեկտրոնային աճուրդին ներկայացված մասնակցության հայտի պատճենը.

ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմի կարիքների համար՝ խմելու ջուր և մեկանգամյա օգտագործման բաժակների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին մասնակցության հայտ են ներկայացրել «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն և Ա/Ձ Գրիգոր Բաբայանը:

ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով առաջին չափաբաժնի համար սահմանվել են հետևյալ հատկանիշները.

- ապրանքի անվանումը՝ ըմպելու ջուր,

- տեխնիկական բնութագիրը՝ Խմելու աղբյուրի ջուր, լրացուցիչ մաքրման փուլ անցած: Անվտանգությունը ՝ ըստ 2-III-4.9-01- 2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 20.10.2014թ. թիվ 1240-Ն որոշման պահանջներին համապատասխան: Շշալցված 18.9լ 19լ տարողությամբ պոլիմերային տարաների մեջ, ընդհանուր քանակությունը՝ 2000 հատ: Մաքրման արդյունքում ջուրը պետք է պահպանի իր բնական հանքային բաղադրությունը: Նախքան ֆիլտրումը պետք է իրականացվի ջրի համի, հոտի և գույնի համապատասխանեցում ակտիվացված ածխի ֆիլտրի օգտագործմամբ, իսկ ածխի վերականգնումը պետք է կտարվի ամեն օր հետադարձ լվացման մեթոդով:

Հանձնաժողովը 04.12.2018թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության.

- 6-րդ կետով որոշել է Աճուրդի առաջին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել Ա/Ձ Գրիգոր Բաբայանին, երկրորդ տեղ զբաղեցնող մասնակից՝ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին:

- 7-րդ կետով ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետով, համակարգի միջոցով ծանուցել է առաջին տեղ զբաղեցնող մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ստանալուց օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա

ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ա/Ձ Գրիգոր Բաբայանը 06.12.2018թ. Պատվիրատուին համակարգի միջոցով ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ա/Ձ Գրիգոր Բաբայանը թիվ 3 հավելվածով ներկայացրել է իր կողմից ներկայացված ապրանքի հետևյալ ամբողջական նկարագիրը.

- ապրանքի անվանումը՝ Aqua arma,

- արտադրողի անվանումը՝ «Aqua arma water company» ՍՊԸ

- տեխնիկական բնութագիրը՝ Խմելու աղբյուրի ջուր, լրացուցիչ մաքրման փուլ անցած: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 20.10.2014թ. թիվ 1240-Ն որոշման պահանջներին համապատասխան: Շշալցված 18.9լ19լ տարողությամբ պոլիմերային տարաների մեջ, ընդհանուր քանակությունը՝ 2000 հատ: Մաքրման արդյունքում ջուրը պետք է պահպանի իր բնական:

«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն 10.12.2018թ. դիմում է ներկայացրել ՀՀ Ազգային ժողով՝ պահանջելով վերջինիս տրամադրել առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ա/Ձ Գրիգոր Բաբայանի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

ՀՀ Ազգային ժողովը 11.12.2018թ. ի պատասխան «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի 10.12.2018թ. դիմումի, հայտնել է հետևյալը.

«Հարգելի մասնակից, անհապաղ Ձեզ ենք ուղարկում ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով իրականացվող գնման ընթացակարգի առաջին չափաբաժնի առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված հայտը, որակավորման փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի աճուրդի արդյունքի արձանագրությունը: Տեղեկացնում ենք, որ Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված՝ հրավերով սահմանված որակավորման փաստաթղթերը թերի են ներկայացված և նրան առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև ս.թ. դեկտեմբերի 13-ը, ժամը՝ 09:00) պահանջվող փաստաթղթերը ուղարկել eauction.armeps.am համակարգի միջոցով՝ էլեկտրոնային ստորագրությամբ:»:

ՀՀ Ազգային ժողովը 11.12.2018թ ծանուցմամբ Ա/Ձ Գրիգոր Բաբայանին հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով իրականացվող գնման ընթացակարգի հերթական նիստը կասեցվել է, քանի որ առաջին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված՝ հրավերով սահմանված որակավորման փաստաթղթերը թերի են: Մասնավորապես՝ պատվիրատուի կողմից սահամնված տեխնիկական բնոյթագրերի հետևյալ պահանջը՝ «Նախքան ֆիլտրումը պետք է իրականացվի ջրի համի, հոտի և գույնի համապատասխանեցում ակտիվացված ածխի ֆիլտրի օգտագործմամբ, իսկ ածխի վերականգնումը պետք է կտարվի ամեն օր հետադարձ լվացման մեթոդով», մասնակցի կողմից ներկայացվող տեխնիկական բնութագրում չի նշվել:

Ա/Ձ Գրիգոր Բաբայանին առաջարկում ենք երեք աշխատանքային օրվա ընթացքում (մինչև ս.թ. դեկտեմբերի 13, ժամը՝ 09:00) պահանջվող փաստաթղթերը ուղարկել eauction.armeps.am համակարգի միջոցով՝ էլեկտրոնային ստորագրությամբ:»:

Ա/Ձ Գրիգոր Բաբայանը 12.12.2018թ. ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի շտկված տարբերակը:

Հանձնաժողովը 13.12.2018թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով որոշել է Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և վերջինիս առաջին չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից:

«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն 14.12.2018թ. կրկին դիմում է ներկայացրել ՀՀ Ազգային ժողով՝ պահանջելով վերջինիս տրամադրել առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ա/Ձ Գրիգոր Բաբայանի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

ՀՀ Ազգային ժողովը 17.12.2018թ. էլ. փոստի միջոցով «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին տրամադրել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ա/Ձ Գրիգոր Բաբայանի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ա/Ձ Գրիգոր Բաբայանը 12.12.2018թ. թիվ 3 հավելվածով ներկայացրած առաջարկվող ապրանքի շտկված ամբողջական նկարագրում «ապրանքի անվանումը» նշել է Aqua arma, իսկ «արտադրողի անվանումը»՝ «Aqua arma water company» ՍՊԸ:

«Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն 21.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված շտկված թիվ 3 հավելվածը չի համապատասխանում Հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից շտկման արդյունքում ներկայացված թիվ 3 հավելվածով առաջին չափաբաժնի անվանում նշվել է՝ «Aqua arma», մինչդեռ Հրավերի տեխնիկական

բնութագիր-գնման ժամանակացույցով առաջին չափաբաժնի անվանումն է՝ «ըմպելու ջուր», իսկ արտադրողի անվանում նշված է՝ «Aqua arma water company» ՍՊԸ: Ընկերության ներկայացուցիչը հայտնել է, որ նման պարագայում Հանձնաժողովը պետք է Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված հայտը գնահատեր անբավարար և մերժեր:

Բողոքի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ Ա/Ձ-ի կողմից ներկայացված թիվ 3 հավելվածով առաջին չափաբաժնի անվանում նշվել է «Aqua arma», իսկ արտադրողի անվանում՝ «Aqua arma water company» ՍՊԸ, և այս կապակցությամբ Պատվիրատուն գտնում է, որ Ա/Ձ Գրիգոր Բաբայանից պահանջվել է նշել ոչ թե չափաբաժնի անունը, այլ առաջարկվող ապրանքի անվանումը, իսկ լատինատառ նշված «Aqua arma» անվանումը առաջարկվող ապրանքի անվանումն է: Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց նաև, որ որակավորման փաստաթղթերի գնահատման ժամանակ ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային ռեգիստրում որոնման արդյունքում պարզ է դարձել, որ նշված՝ «Aqua arma water company» ՍՊԸ-ն գոյություն ունի՝ «ԱՔՎԱ ԱՐՄԱ ՈՒՈԹԵՐ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ, սակայն թիվ 3 հավելվածում մասնակցի կողմից նշվել է այդ ՍՊԸ-ի կանոնադրությամբ հաստատված անգլերեն անվանումը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):
- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ»

պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին.

- 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները.

- 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը.

- 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, ևփաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին.

ՀՀ Ազգային Ժողով աշխատակազմի կարիքների համար՝ խմելու ջուր և մեկանգամյա օգտագործման բաժակների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 1-ին մասի՝

- 3.1 կետի «ա» ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում նույն հրավերի 2-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝ իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 3:
- 4.3 կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ նույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն, որը ներառում է նաև՝ հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում առաջարկվող ապրանքի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):
- 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմի կարիքների համար՝ խմելու ջուր և մեկանգամյա օգտագործման բաժակների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցության հայտ են ներկայացրել «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն և Ա/Ձ Գրիգոր Բաբայանը:

- Աճուրդի առաջին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել Ա/Ձ Գրիգոր Բաբայանը:

- ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով առաջին չափաբաժնի անվանումն է՝ «ըմպելու ջուր»:

- Հանձնաժողովը Ա/Ձ Գրիգոր Բաբայանին 04.12.2018թ. առաջարկել է սահմանված ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող Հրավերով նախատեսված փաստաթղթերը, սակայն սահմանված ժամկետում (06.12.2018թ.) Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ:

- Հանձնաժողովը 11.12.2018թ. ոչ ավտոմատ ծանուցմամբ առաջարկել է Ա/Ձ-ին շտկել առկա անհամապատասխանությունները:

- Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից 12.12.2018թ. ներկայացված շտկված թիվ 3 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում «ապրանքի անվանում» նշվել է «Aqua arma», իսկ «արտադրողի անվանում»՝ «Aqua arma water company» ՍՊԸ:

- 13.12.2018թ. Հանձնաժողովը Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված հայտը գնահատել է բավարար և վերջինիս ճանաչել է ընտրված մասնակից:

- ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային ռեգիստրի պաշտոնական կայքէջում կատարված որոնման արդյունքում պարզվեց, որ առկա է ««ԱՔՎԱ ԱՐՄԱ ՈՒՈԹԵՐ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ» անվանումով իրավաբանական անձ, սակայն ««Aqua arma water company» ՍՊԸ» անվանումով իրավաբանական անձ գոյություն չունի:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը հաշվի առնելով վերոգրյալը գտնում է, որ Հանձնաժողովը Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելով գործել է ոչ իրավաչափ, քանի որ՝

- ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով առաջին չափաբաժնով գնման ենթակա ապրանքի անվանում սահմանվել է՝ «ըմպելու ջուր», իսկ Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից առաջարկվող ապրանքի անվանումը նշվել է՝ «Aqua arma», ինչն ըստ էության կարող է

հանդիսանալ առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը այլ ոչ թե գնման ենթակա առարկայի անվանումը,

- ««Aqua arma water company» ՍՊԸ» անվանումով իրավաբանական անձ ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային ռեգիստրում գոյություն չունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին 20.12.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ընդունել՝

- 13.12.2018թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում,
- Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**